քանի տարուայ օրացոյցների յաւելուածները կարելի լինի միասին կազմել և, իբր գրքեր, գրադարանում ունենալ։ Կազմողը ամեն տարի կը տար բովանդակութեան ընդհանուր ցուցակը, երեսների ցուցմունքներով։ Հետաքրքրական դարձնելու համար, այն ժամանակ, կազմողը ստիպուած չէր լինի ամեն տարի կրկնել արդէն հրատարակածները. իսկ եթէ այժմեան ձևով շարունակի, առաջուայ տարիների յաւելուածները կը կորչեն։ Ասածս նպատակի համար պէտք է յաւելուածների երեսները իրանց թիւերը ունենան և շարունակւին ամեն տարի՝ մինչ մի հատոր կազմելը և նոր հատորի սկսելը։

Ա.

ԱՂԱՆԵԱՆՑ ԳԻՒՏ *քահանայ*. «ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ» 1890 *թուականի համար. տպ. Մարտիրոսեանցի։ Գինն է* 1 *ր.*

Սա երկրորդ տարին է, որ կազմողը հրատարակում է իւր հատուածական օրացոյցը։ Դա՝ պատի օրացոյց է, որի ամեն օրուայ թերթիկը կտրւում է, յաջորդ օրուայ թերթիկը բացելու համար։ Գաղափարը վերցրած է «Кавказскій Календарь» անունով պատի օրացոյցից, որը տարիներից ի վեր հրատարակւում է Կովկասեան ստատիստիքական կոմիտէն։ Ամեն օրուայ թերթիկի վերայ նշանակուած է այն բոլորը, ինչ միւս օրացոյցներում կայ, բացի դրանից, յիշատակուած է այդ թուին պատահած մի կամ մի քանի կարևոր դէպքեր։ «Кавказскій Календарь»-ի օրացոյցը քաղում է իւր նիւթը, մեծ մասամբ, Կովկասի վարչական և պատերազմական կեանքից. իսկ Աղանեանցինը՝ հայկական կեանքից։

Այդ օրացոյցի ձևը ունի առաւելութիւններ, որոնք նրան յարմար են դարձնում մանաւանդ կօնտորների համար։ Գրական մասը երկրորդական դեր է խաղում։ Բայց հէնց այդ է մեզ վերաբերեալը։ Արդ, պէտք է խոստովանած, որ այդ բաժինը կարելի էր դեռ ևս մշակել։ Նախ, շատ են զանցառութեան առած ընդհանուր կովկասեան եղելութիւնները, որոնց նկատմամբ շատ հարուստ է «Кавк. Кал.» պատի օրացոյցը։ Հայկական կեանքը, Կովկասում, շատ կողմերով նաև ընդհանուր կովկասեան կեանք է։ Մի՞թէ կովկասեան զանազան հիմնարկութիւնները՝ դատարան, վարչութիւն և այլն, մեզ չեն վերաբերում։ Բայց գանք տուած տեղեկութիւններին։ Այստեղ մենք նկատում ենք մի չափազանց մեծ երկրպագութիւն մի քանի անուններին։ Օրինակ՝ յայտնուած է պրոֆ. Քերովբէ Պատկանեանի հօր մահը (15 յունւ.), մի ինչ որ «քաջ նկարիչ և երևելի պատկերահան» տիրացու Ռաֆայէլի մահը (27 յունւ.)։ Ի՞նչ նշանակու-

թիւն ունի, որ «ուսումնասէր Յաւհան Յովհաննէս Ամիրան Բ. Դիւան հրամանով Եւրոպա ճանապարհորդեց» (23 փետր.)։ Մի՞թէ մի մեծ պատմական եղելութիւն է, որ 1829 թ. 12 հրէաներ հայոց դաւանութիւն ընդունեցին Կ. Պօլսում։ Կամ մի՞թէ, խոսք. վանեցի Աստանիկ Տէր-Մարգարեանցը, այդ յայտնի բաղդախնդիրը, 1875-ին ընտրուեց անդամ Պարիզի Ակադէմիայի, եթէ միայն այդ սխալ անունով ուզում են ասել «Ֆրանսիական Ակադէմիան», չենք կարծում. իսկ ի՞նչ նշանաւոր բան է Գրինխոնի երկրագ. վարժարանում ոսկէ մրցանակ ստանալը (տես 19 մայիսի)։ Նկատենք, որ Բերլինի Վեհաժողովը ուղարկած երկու հայ պատգամաւորները էին ոչ թէ Խորէն-Նարպէյ և Խրիմեան, այլ Խրիմեան և Խորէն-Նարպէյ (1-ին յունւ.)։ Համաձայն ենք, որ այստեղ զանազանութիւնը միմիայն Ն-ի մէջ է։ Այդ ի՞նչ Մ ա ր ա գ հեծելազօր խապառ կողոպտեց Մշու և ս. Կարապետի վանքը (29 յուն.)։—Լուի Ֆիլիպպ կայսր չէր (4 օգոստոս), այլ թագաւոր և նորա որդին էր ոչ թէ Մոնպանսիէ, այլ դուքս դը Մոնպանսիէ։

Կարելի էր չը մոռանալ Րաֆֆիի մահուան մասին, մանաւանդ որ փչւած են Ծերենցի, Շանշեանի, Պալասանեանի մահուան օրերը։

Մենք կրկնում ենք, որ հատուածական օրացոյցների առաւելութիւնները նոցա ձևի մէջն են կայանում. այնպէս որ, եթէ չը լինին էլ ուրիշ առաւելութիւններ, արժէ նրանց ձեռք բերել և պատի վերայ կախել. ամեն սենեակում նոքա կարող են նոյն իսկ պատի զարդ համարուել։ Բայց քանի որ օգտակար է համարւած օրացոյցների այդ ձևը ծառայեցնել նաև գրական, քաղաքական, տնային տնտեսութեան և այլ տեղեկութիւններ հաղորդելու համար, մենք արդար ենք համարում պահանջել, որ այդ մասի վերայ կազմողները լուրջ կերպով աշխատեն։ Եւ որպէս զի մեր պահանջը կարելի լինի կատարել, մեր առաջին պարտքն է այդ, մանաւանդ գաւառներում շատերին դեռ ևս անծանօթ, օրացոյցի տարածւելուն նպաստենք։ Թիֆլիսի, Բագուի և այլ տեղերի քաղաքացիներից շատ շատերը ոչինչ կորցրած չեն լինիլ, եթէ «Кавк. Кал.» օրացոյցի տեղ ձեռք բերեն Ադամեանցի հատուածական օրացոյցը։

Ա.

ՉՄՇԿԵԱՆ ՄԱԿԱՐ. «ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ» 1890 *թ. Քր.*, (*երրորդ տարի*). *Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի*, 16-*ածալ*, 128 *երես։ Գինն է* 15 *կ.*։

Այդ օրացոյցի յաւելւածը պարունակում է ցուցակներ օրերի, երբ պսակի խորհուրդը չի կատարւում և օրերի, երբ դպրոցներում արձա-